03040723 – 0160 – 020

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 128/2-Գ.Ա.

(Հողամասի ուղղակի վաճառքի մասին)

ք.Երևան «23» 04 2003թ.

Հայաստանի Հանրապետությունը ի դեմս Երևանի քաղաքապետ Ռ.Նազարյանի, որի անունից Երևանի քաղաքապետի 01. հունիսի 2001թ. h. 551 որոշման հիման վրա հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի անշարժ գույքի կառավարման վարչությունը, հանձինս վարչության պետ Ա.Գևորգյանի, այսուհետ՝ «Վաճառող» մի կողմից, և

Արման Մխիթարյան

(անձի անվանումը կամ անուն ազգանունը)

այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից, Երևանի քաղաքապետի «18» 04 2003թ. h. 815 որոշման հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրով վաճառողը պարտավորվում է գնորդին որպես սեփականություն հանձնել Թբիլիսյան խճուղու հարող տարածքում գտնվող 2000,0 ք.մ հա մակերեսով հողամաս, այսուհետև՝ «գույք», __________ նպատակով օգտագործելու համար, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 1723080 ՀՀ դրամ:

2. Գույքի համար վճարված գինը որոշվում է հողամասի կադաստրային հաշվարկային արժեքով: 1 հա արժեքը կազմում է 8615400 ՀՀ դրամ:
Սույն պայմանագրի կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է:

3. Գույքի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

4. Վաճառողը երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքելու պահին գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ և արգելանքի տակ չի գտնվում:

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

5. Վաճառողը պարտավոր է սույն՝ պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից երկօրյա ժամկետում գնորդին՝ հանձնման-ընդունման ակտով հանձնել գույքը, ինչպես նաև գույքի նկատմամբ գնորդի՝ գրանցված իրավունքները հավաստող փաստաթղթերը:

6. Եթե վաճառողը գնորդին է հանձնել սույն պայմանագրի 1. կետում նշված պայմաններին չհամապատասխանող գույք, ապա գնորդն իրավունք ունի հրաժարվել հանձնված գույքի և պահանջելու վերադարձնել գույքի համար վճարված գինը:

III. Սեփականության իրավունքի փոխանցումը

7. Սույն պայմանագիրը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման:

8. Գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

IV. Կողմերի պատասխանատվությունը

9. Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են գույքային պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

01040723 - 0310 0202

V.Պայմանագրի գործողությունը

10. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքվելու, նոտարական կարգով վավերացվելու և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնում պայմանագրից ծագող իրավունքների գրանցման պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

VI. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

11. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը,ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցման միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VII Եզրափակիչ դրույթներ

12. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կամ պայմանագիրը լուծվում է գրավոր համաձայնությամբ կամ դատարանի վճռով:

14.Սույն պայմանագիրը կնքված է 4 օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ, մեկ օրինակ մնում է նոտարական գրասենյակում, իսկ մեկ օրինակ՝ Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումում:

15. Սույն պայմանագրի ձևակերպման և պետական գրանցման հետ կապված բոլոր ծախսերն ու վճարումները կատարվում են Գնորդի կողմից:

16. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

Վաճառող՝ ________________	Գնորդ՝ ____________________
(հասցեն)	(հասցեն)
________________	
(բանկային վավերապայմանները)	(բանկային վավերապայմանները)
________________	________________
(ստորագրությունը)	(ստորագրությունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆ * 02520926 * ԵՐԵՎԱՆԻ ... ՆՈՏԱՐԱԿԱՆ ...